

ԾԽԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Ուրախալի է արձանագրել, որ սփյուռքի թեմերում հրատարակվում են նաև, առաջնորդարանների հովանավորության ներքո, ծխական եկեղեցական խորհուրդների և կամ կրոնական-մշակութային ընկերությունների նախաձեռնությամբ մի շարք ծխական ամսագրեր և պարբերաթերթեր, որոնք հարազատորեն ներկայացնում են տվյալ թեմի, համայնքի եկեղեցական, կրոնական, մշակութային և ազգային կյանքը:

Այժմ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն են ներկայացվում նման ամսագրերի մի քանի հրատարակությունները, որոնք հոգևոր, կրոնական, ազգային, հայրենասիրական, դաստիարակչական կարևոր դեր են կատարում թեմերում:

Ա. ԼՈՅՍ. ԱՄՍԱԳԻՐ ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՍԻՏՆԻ:

Քսաներեքերորդ տարի է, որ ամենայն կանոնավորությամբ, տարին 12 համար, 20 էջ ծավալով, հայերեն և անգլերեն լեզուներով և հետաքրքիր բովանդակությամբ հրատարակվում է **Լոյս** ամսագիրը, որպես պաշտոնական օրգանը Ավստրալիայի հայոց թեմի: Ամսագիրը հրատարակվում է վերին հսկողության ներքո թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպ. Գազանճյանի:

Ամսագրի էջերը զարդարել են միշտ Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակները, քարոզներն ու ելույթները: **Լոյս**-ը լայնորեն իր ընթերցողներին տեղյակ է պահել նաև Մայր Աթոռի և ընդհանրապես Հայ Եկեղեցու կյանքում տեղի ունեցած կարևոր կրոնական, եկեղեցական, պատմական իրադարձությունների հետ և ի մասնավորի հանգամանորեն ներկայացրել է Ավստրալիայի հայոց եկեղեցական,

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH IN AUSTRALIA AND NEW ZEALAND

ԱՄՍԱԳԻՐ ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ, ՍԻՏՆԻ

ԼՈՅՍ

LOOYCE

MONTHLY BULLETIN OF THE ARMENIAN CHURCH IN SYDNEY

Registered at the G.P.O., Sydney, for transmission by post as a periodical. Category 'A'.

ALL CORRESPONDENCE TO
BOX 694, CHATSWOOD
N.S.W. – 2067

Telephones
CHURCH 41 8056

PRICE: -
50 c

Թիւ 8
ՅԱՐԻ 25
ՕԳՈՍՏՈՍ 1980

Vol. 8
25th Year
August 1980

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ETCHMIADZIN, The Holy See of the Armenian Church

կրթական, մշակութային, հայրենասիրական, մարզական կյանքը, խանդավառ լուրեր է հաղորդել միաժամանակ վերածընված Հայոց աշխարհի տարբեր բնագավառներում ձեռք բերած հաջողությունների և նվաճումների մասին և իր էջերը տրամադրել հայրենական նոր գրականության հրատարակության:

Այժմ ձեռքի տակ ունենք **Լոյս**-ի 1980 թվականի օգոստոսի համարը, որտեղ (էջ 1—5) հրատարակվել է Հայոց Հայրապետի գրած «Հայ ժողովուրդը և իր Մայր Եկեղե-

ցին» բովանդակալից, կարևոր խմբագրականը («Էջմիածին» ամսագիր, 1980 թ. ապրիլի համար, էջ 6—9), ինչպես նաև այդ խմբագրականի անգլերեն ընտիր թարգմանությունը (էջ 11—16):

Լոյս-ը ունի նաև թեմի առաջնորդ սրբազանի և առաջնորդական փոխանորդ վարդապետի մատուցած պատարագների, խոսած քարոզությունների և եկեղեցական, էկումենիկ այցելություններին նվիրված մասնավոր բաժին, ինչպես նաև ընթացիկ ամեն ամսվա տոների և կրոնական հանդիսությունների «Տօնացոյց»-ը, ի դյուրություն հավատացյալների:

Լոյս-ը վերջին տարիներում այնքան ձեռնհասորեն խմբագրում է Ս. Հակոբյանց վանքի միաբան և Ավստրալիայի հայոց թեմական առաջնորդական փոխանորդ Տ. Աղան ծայրագույն վրդ. Բալիոզյանը:

Ավստրալիայի հայոց թեմի երկրորդ կարևոր քաղաքում Մելբուռնում, սկսվել է վերջերս հրատարակությունը **Յոյս** ծխական ամսագրի, որի միայն մեկ համարը ունենք ձեռքի տակ: Երբ **Յոյս**-ի գոնե մեկ տարվա ամբողջական հավաքածուն ունենանք մեր տրամադրության ներքո, ապա կխոսենք ծխական այդ թերթի բովանդակության մասին:

Բ. ԳԵՂԱՐԴ. ԾԽԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ, ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ, ՆԻՍԻ:

Գեղարդ-ը կրոնական, ազգային եռամսյա պարբերական է, որը հրատարակվում է ութ տարուց ի վեր, Մայր Աթոռի միաբան, Նիցցայի հայոց Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Տարոն ծայրագույն վրդ. Ծերեճյանի ձեռնհաս խմբագրությամբ:

Գեղարդ-ը ունի չորս հոգուց բաղկացած խմբագրական մարմին:

Գեղարդ-ը հրատարակվում է Նիցցայի և շրջակայքի հայության մշակութային ընկերակցության կողմից: Նիցցայում և նրա շրջակայքում ապրում է շուրջ հինգ հազար հայություն:

1980 թվականին հրատարակված եռամսյա 3-րդ համարի (էջ 1—24) խմբագրականում նշվում է, որ **Գեղարդ**-ը «կաշխատի օգտակար դառնալ Նիս Գոթ դ'Ազյուրի հայ համայնքին, կրոնական ընկերակցությանս ազգանվեր վարչությունս կհովանավորե և կմատակարարե թերթիս հրատարակությունը, միշտ ձգտելով տալ Անոր, իր պատմական առաքելության սահմաններուն մեջ, ավելի փայլ և շքեղություն... և առավել... որակ»:

Խմբագրականում (էջ 1—2) նշվում է նաև, որ **Գեղարդ**-ը «մեր գաղութի հաղորդակցության կապն ու կենսաույժն է դարձած», նպատակ ունենալով «հասնիլ ամեն մեկ հային—հինգ հազարին—տարածուն գաղութիս մեջ՝ դառնալով մնայուն և ազդու կապ...», «ծանոթանալ և ծանոթացնել մեր համայնքի սահմաններուն մեջ ապրող և ստեղծագործող հայ ազգի տաղանդավոր զավակներու մշակութային արժեքներուն...

Գեղարդ-ն է խրատու միակ միջոցը՝ մեր համայնքային ծավալվող գործունեության և աշխատանքներուն»: Խմբագրականը հաստատում է, որ **Գեղարդ**-ը «դարձած է նաև շարժուն դպրոց՝ կրոնական և ազգային, պատմական, գրական ու մշակութային արժեքներու»:

Այս առաջադրանքների լույսի տակ, **Գեղարդ**-ի էջերը զարդարված են կրոնա-բարոյական, եկեղեցագիտական, ճանապարհորդագրական, գրական-բանաստեղծական բաժիններով:

Գեղարդ-ը հրատարակվում է հայերեն և ֆրանսերեն բաժիններով: Ընտիր թուղթ և մաքուր տպագրություն: